

վոր մարդոց հատուկ կենդանի և շարժիչ ուժի մը կերպարանքը ստացած: Պիտի ուղիղ, որ մեր հայրենիքի վարիչները և աշխարհի բոլոր դիվանագետները տհանեին մեր ժողովուրդին ցուցադրած այս զգացումները. պիտի ուղիղ, որ թյուրքերն իսկ հասկնաշին զայն, որպեսզի ըմբռնեին, թե ի՞նչ տեղ կդրավե հայրենիքը մեր կյանքին մեջ: Մեր գոյության իմաստն է ու միակ նպատակը՝ մեր կյանքին: Մենք չենք կըրնար ապրիլ այլևս առանց հայրենիքի: Կը-

բաշկուտենք մեր օրերը, անոր հասնելու համար. թերթիք կկարդանք, դիվանագետներու գործունեության հիետեկինք սրտաարոփ, մեր մեկնումի օրուան սպասելով աշնդիտ: Ա: կհավատանք, որ պիտի տրվի մնջի այս անգամ մեր հայրենիքը. կհավատանք այլևս շթաղել մեր մարմինը օտար հողերու տակ. կհավատանք ապրիլ ու մեռնիլ մեր երկնքի արևին ու աստղերուն տակ:

ԼԵՎՈՆ ԶՈՐՄԻՍՅԱՆ
(«Արևմուտք» թիվ 34 1945 թ. Փարիզ)

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ի Ս

ՏՈՒՆԴԱՐՁ

Եր մոտենա՞մ... ահա՝ դռներդ կը բացուին, մ'րժան դիզված կարու ունիմ սրտի մեջ, Պիտ արտասում ես հուզումես ցնձագին Այն վարկյանին երբ աշխեր տեսնեն Ինզ:

Պիտ հեռանամ այս անձանոք ափերեն, Մոռ է ժամը անվերադարձ մեկնումիս, Խ-նչան ուժեղ է պատկերդ լուսեղեն, Ուր կը գերե հայրենաբաղձ իմ հոգիս:

Կը մոտենա՞մ... ո՞վ սիրակխն հայրենին, Իմ պապերուս և մամերուս սրբավայր, Եվ կը ճայիմ ես հեռուսն գեղեցիկ Հովհաններուդ և դաշտերուդ ակաղանուն, Ուր հայ տղան և հայ աղջիկը սիրուն Անպարտելի ցեղիս նոր երգը կերգեն:

Պիտ հեռանամ այլուրի իայս ափերեն Զանը հույսիս միշտ պինդ բռնած ափիս մեջ Եվ պիտի զամ ո՞վ հայրենին, ծնրադիր Քու խորանիդ առջ վառել զայն, անմար Զանիդ լույսեն, և սրտիս խոր ու մրին Անկյուններն ու խորշեր երդենեւ:

Կը մոտենա՞մ... ահա՝ դռներդ կը բացուին, Բազում դիզուած անմեռ կրակ սրտի մեջ. Պիտ արտասում ես հուզումես խոլաբար Այն վարկյանին երբ աշխեր տեսնեն Ինզ:

ՀՈՎՍԵՓ ԹՀԿԸՐԺԱՆ

ԽԱՐԹՈՒՄ (ՍՈՒԴԱՆ)

(«Արակս», հունվար 26 1946 թ.)

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ի Ն Զ Ա Յ Ն Ը

Սիյուռքի հայության ականջին ոչ մեկ ձայն այնքան անուշ կինչե, որքան մայր հայրենիքի ձայնը, որ սկսած է հնչել: Մեր բաղցր հայրենիքը, մայր Հայաստանը: դարավոր գերութենե և ստրկութենե հենաւու, հաշողեցավ փշրել իր շղթաները և վերածնի առույք ու կայտառ, ավելի քան երբեք: Մեր հայրենիքը այսօր ո՞չ թշվառ է և ոչ ալ անտեր, ինչպես որ վարժված էինք երկար տարիներե ի վեր երգել. — «Մեր հայրենիքը, թշվառ անտեր», Այս՝ էր երբեմն, բայց այսօր անցած են թշվառության և անտերության տարիները: Այսօր վերջ գտած է թշշվառությունը՝ շնորհիվ հայ քաջակորով բազուկներու կատարած նվաճումներուն: Այսօր անտեր չէ մեր հայրենիքը՝ շնորհիվ սովետ ժողովուրդներու եղբայրակցության և քաջամարտիկ հայ զորականներուն:

Այս հայրենիքն է, որ այսօր հրավեր ուղ-

ղած է իր տարագիր զավակներուն՝ վերադառնալու իր ծոցը և լծվելու վերաշինության գործին, ինչ որ ամեն հայու սրբազն պարտականությունն է: Հայրենամիքուրությունը լոկ զգացում մը չէ. ճշմարիտ հայրենասիրությունը պետք է գործնական ըլլա և կամ գործով պետք է հաստատվի, ապա թե ոչ ան կմնա զգացում և խոսք, ինչ որ ոչ միևնու կրերե հայրենիքին:

Ուրեմն ժամանակը եկած է երգելու. —

«Իմ Հայրենիքը զիս կը կանչի,

Հեռու եմ Հայաստաննեն,

Հայու որդույն կը վայելե՞»

Հեռու մնալ Հայաստաննեն»:

Ու հայու որդույն չի վայելեր Հայաստաննեն հեռու մնալ և բաշքել թափառական հայու անստույգ և անորոշ կյանքը: Հայու որդույն կվայելի ընդունիլ հայրենիքին հը-